Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

69/4165/ 14 ապրիլի 2012 շաբաթ

ISSN 1829-2224
12057
9 771829 222003


## Բա դրա վերջը ի՞նչ է լինելու

Ի տարբերություն քաղաքական ուժերի ներկայացուցիչների (դրանց մեծ մասի), որոնք իրենց մեքենաներից գրեթե դուրս չեն գալիս եւ ամենուր հայտնվում են թիկնապահների աշալուրջ հսկողության ներքո, ես Երեւանում զբոսնում եմ հիմնականում ոտքով, «ախրանա» չունեմ, եւ մարդիկ, որոնց հետ ես շփվում եմ, չեն կաշկանդվում ինձ հետ զրուցելիս, որովհետեւ գիտեն, որ ես այս կամ այն կուսակցական թիմից չեմ եւ չեմ եկել իրենց ինչ-որ բանում համոզելու: Այդ իսկ պատճառով գուցե հետաքրքիր է իմանալ, թե ինչ են մարդիկ խոսում փողոցներում: Առաջին հարցը, որ ինձ տալիս են՝ «լավ, ի՞նչ է լինելու էս ժողովրդի (ազգի, երկրի, պետության) վերջը»: Հասկանալի է, որ դա հռետորական հարց է՝ պարզապես խոսակցությունը սկսելու համար, իրականում հարց տվողները չեն ուզում ինձնից լսել պատասխանը: Մյուս կողմից՝ հատկանշական է, որ մարդիկ հարցը ձեւակերպում են «վերջի» տեսանկյունից, ենթագիտակցության մեջ ունեն «վերջի» մասին որոշակիորեն տագնապահարույց պատկերացում:

Հիմնականում մարդիկ, իհարկե, բողոքում են: Պարզ է. կյանքից գոհ մարդիկ, որպես կանոն, փողոցներում ոտքով չեն քայլում եւ լրագրողներին իրենց բողոքներով չեն դիմում: Բայց այդպիսի դժգոհություններ ես լսել եմ թե խորհրդային տարիներին եւ թե, ավելի շատ, իհարկե, մեր անկախության շրջանում: Վրդովմունքը, զայրույթը, որը սովորաբար հայտնում են իմ զրուցակիցները, հետեւյալն է. «Ինչո՞ւ պիտի էս ժողովուրդը այդքան վատ ապրի, իսկ սրանք ապրեն այդքան ճոխ»: «Ժողովուրդը» ասելով մարդիկ նկատի ունեն հենց իրենց, իսկ «սրանց» տակ առաջ հասկանում էին ռայկոմի քարտուղարներին, դատախազներին, պահեստապետերին, իսկ հիմա օլիգարխներին եւ պաշտոնյաներին:

Իհարկե, կոմունիստները կասեն, որ իրենց ժամանակ նման դժգոհություններ չեն եղել, ՀՀՇ-ականները կասեն, որ իրենց իշխանության օրոք այդ դժգոհողները քիչ էին: Վաղը, եթե այլ իշխանություն լինի, նույնը կասեն հանրապետականները: Բայց գուցե արժե մտածել, թե ինչու, ինչ պատճառով են մեր քաղաքացիները իրենց կյանքը համեմատում թանկարժեք «ջիպեր» եւ դղյակներ ունեցողների հետ ու բողոքում դաժան, անարդար ճակատագրից, թե ինչու իրենք այդ ամենը չունեն: Հիմնական պատճառն այն է, որ ոչ մեկի մոտ կասկած չկա՝ չնչին փոքրամասնությունն իր ճոխությունը ձեռք է բերել ճնշող մեծամասնության չքավորության միջոցով: Ինչ խոսք, այդ համոզմունքն իր հիմքերն ունի: Բայց իմ տպավորությամբ՝ ամբողջ էներգիան ծախսել հարուստներին նախանձելու եւ նրանց եկամուտները հաշվելու վրա, այնքան էլ արդյունավետ չէ: Փոխարենը կարելի է այդ էներգիայի մի մասն ուղղել «խաղաղ նպատակների» վրա՝ փորձելով ունենալ սեփական, թեկուզ շատ ավելի համեստ նվաճումները:

20 տարի ընդդիմության քարոզչության հիմքը այդ դժգոհությունն է, հասցեատերը՝ բողոքական զանգվածը: Բայց թող իշխանական կամ ընդդիմադիր կուսակցությունների հարգարժան ներկայացուցիչները չնեղանան, պիտի արձանագրեմ. իմ զրուցակիցներից ոչ մեկը որեւէ քաղաքական ուժի հետ իր հույսերը չի կապում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# «Սա օլիգարխների դաշտը չի, սա իմ դաշտն է»



«Ես քաղաքական գործիչ եմ, իմ դաշտը սա է, սա Ալեքսանյան Սամվելի եւ մնացած օլիգարխների դաշտը չի, իրենք թող հիշեն,ականջին օղ անեն: Սա այն դաշտն է, որտեղ մենք ենք, եւ իրենք պիտի հեռանան այդ դաշտից: Սերժ Սարգսյանն իրենց զոռով որ բերել է, սխալ է արել: Սերժ Սարգսյանն էլ գիտի, ուզում էր հրաժարվել՝ չկարողացավ: Մեզ նման մարդիկ պաղլամենտում իրենց պետք չեն, որովհետեւ մենք գալու ենք, իրենց ասելու ենք՝ գնացեք, դուք ավելի հաջողակ եք բիզնեսում, ես հաջողակ չեմ բիզնեսում, չեմ էլ փորձել զբաղվել: Ես դասախոս եմ եղել, կարողանում եմ օրենքներ կարդալ, օրենքներ գրել, ես լավ հասկանում եմ այդ ամեն ինչից, իրենք չեն հասկանում»,- երեկ Aravot.am-ի հետ զրույցում ասաց Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 8 ընտրատարածքում մեծամասնականով պատգամավորության թեկնածու առաջադրված ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրյանը: Նա խոստացավ, որ բիզնեսմենների համար լավ պայմաններ կստեղծի. «Իդեալական պայմաններ՝ առաջին հերթին Սամվել Ալեքսանյանի համար: Ինիչիալյոց, իմ գրած օրենքների շնորհիվ է, որ ինքը սկզբում կարողացել է կապիտալ հավաքել: Եթե ես մտածեի իրենց նման, հիմա իրենք չէին լինի, ես իրենց տեղը կլինեի: Օլիգարխը կլիներ Վահագն Խաչատրյանը»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ԲՀԿ առաջնորդը՝ Րաֆֆի Հովհաննիսյանի մասին

«Ես Րաֆֆի Հովհաննիսյանին շատ հարգում եմ, ինքը շատ նվիրյալ հայրենասեր է, բայց այդ միտքը չեմ կարողանում հասկանալ»,- երեկ լրագրողների հետ զրույցում անդրադառնալով «Ժառանգության» կեցվածքին՝ ընտրությունների վերահսկման միասնական շտաբ ստեղծելու հարցում, ասաց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Կոալիցիայի մասին հարցին էլ պարոն Ծառուկյանը հակադարձեց. «Կոալիցիան, այսպես թե այնպես, ամսի 6-ից հետո վերջացած է: Խորհրդարանական ընտրություններից հետո նորից նոր կոալիցիա կստեղծվի, ի՞նչ կստեղծվի... Բոլորը պետք է համախմբվեն: Ես ստորագրել եմ եւ իշխանության հետ, եւ ընդդիմության: Պատրաստ եմ մասնակցել արդար, թափանցիկ ընտրությունների»:

Կարդացեք էջ 3:

### Ո՞նց ես ուրիշին փոխելու, եթե կամք չունես ինքդ փոխվելու

Երեկ Եղեգնաձորում ՀՅԴ հրավիրած հանրահավաքում ելույթ ունենալով՝ այդ կուսակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը կասկածի տակ առավ այն ուժերի հայտարարությունները, թե գալու են երկրում բարեփոխումներ անելու: «Ի՞նչ փոփոխություններ են խոստանում նրանք, եթե իրենք չեն փոխվում: Սուտ են ասում, թե գալիս են փոխելու, հեղափոխություն անելու: Եթե դու կամք չունես ինքդ քեզ փոխելու, ո՞նց ես ուրիշին փոխելու»,- հռետորական հարցադրում արեց դաշնակցական գործիչն ու նկատեց, թե փոփոխություններ խոստացող բոլորն ապրել ու գործել են մեր աչքի առաջ, ու ժողովուրդը կարող է կողմնորոշվել՝ ում խոսքին հավատալ, ում՝ ոչ, եւ որ այդ խոստումները, որոնք տրվում են, միայն հայ ժողովրդի հոգեվարքը երկարաձգելու են:

Կարդացեք էջ 3:

### Ձերբակալել են Գյումրիում սպանության մեջ կասկածվողին

Ոստիկանությունը ձերբակալել է Գյումրու Սեւ Ղուլի տարածքում 27-ամյա Կարեն Եսայանի սպանության մեջ կասկածվողին: Հիշեցնենք, որ Կարենը ժամանել էր ԱՄՆ-ից ու պատրաստվում էր նշանվել քաղաքապետ Վարդան Ղուկասյանի դստեր հետ, ով Գյումրու երաժշտական դպրոցներից մեկի տնօրենն է: Թե ո՞վ է ձերբակալվածը, ոստիկանությունը, ելնելով նախաքննության շահերից, անուն-ազգանուն չի հրապարակում, մինչդեռ Գյումրու հեռուստաալիքներից մեկը, հղում անելով իր ոստիկանական աղբյուրներին, արդեն իսկ հրապարակեց, որ կասկածյալը Անիի տարածաշրջանի նախկին ոստիկանապետ Սամվել Սարգսյանի որդին է՝ 30-ամյա Հարություն Սարգսյանը, որին ձերբակալել են Բավրայի սահմանը հատելիս:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Տեսակետ» մամուլի ակումբի հյուրն է ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրյանը:

### Եղանակ

Երեւան +7 +23, Շիրակ -1 +17, Կոտայք -1 +17, Գեղարքունիք -1 +17, Լոռի +3 +19, Տավուշ +7 +21, Արագածոտն լեռներ -1 +17, Արագածոտն նախալեռն. +5 +22, Արարատ +5 +23, Արմավիր +5 +23, Վայոց Ձոր լեռներ -1 +17, Վայոց Ձոր նախալեռն. +5 +23, Սյունիքի հովիտներ +9 +19, Սյունիքի նախալեռներ +4 +17, Արցախ +7 +19

## «Որոշ պաշտոնյաներ երեւակայության լրջագույն ավելցուկ ունեն»

«Ես ցավում եմ, որ մարդկային դժբախտությունը եւ ցավը չեն սթափեցնում որոշ պաշտոնյաների, եւ նրանք փորձում են անգամ նման դժբախտությունը քաղաքականացնել»,- Aravot.am-ին ասաց ԲՀԿ-ական պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը՝ անդրադառնալով Գյումրիի քաղաքապետի՝ կայքերից մեկին տված հարցազրույցին, որում նա իր փեսայի սպանությունը համարում էր քաղաքական եւ ասում, որ ձերբակալված տղան «իր շրջապատով» ԲՀԿ-ական է: Տիկին Զոհրաբյանը վստահեցրեց, որ ոչ ձերբակալված անձն է ԲՀԿ-ական եւ ոչ էլ ԲՀԿ-ի որեւէ անդամ, որեւէ համակիր այդ դեպքի հետ որեւէ առնչություն ունի: «Ես, իհարկե, հասկանում եմ, որ որոշ պաշտոնյաներ երեւակայության լրջագույն ավելցուկ ունեն, սակայն ուղղակի պարկեշտ չէ ընտանեկան ողբերգության մեջ անգամ քաղաքական դիվիդենդներ փնտրել: Ընտրությունները գալու եւ անցնելու են, եւ պետք չէ այնպես ընկնել քաղաքական էյֆորիայի գիրկը, որ խիստ վտանգավոր հայտարարություններ անել»,- ասաց մեր զրուցակիցը:

Նա հաեւ հիշեցրեց, որ ի տարբերություն Գյումրիի քաղաքապետի՝ ոստիկանության Շիրակի բաժնի պետը հայտարարել էր, որ կատարվածը քաղաքական որեւէ ենթատեքստ չունի:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## «Ես ինձ սենատոր եմ համարել»

«Իմ հիմնական հակառակորդը եւ մրցակիցը ժամանակն է, որովհետեւ մտածում եմ՝ կհասցնե՞մ ներկայացնել ինձ, թե՞ չէ: Բոլոր հինգ մրցակիցներս էլ արժանի մրցակից են, բայց իմ հիմնական հակառակորդը ժամանակն է: Ես ամեն օր աշխատել եմ, 12-14 տարի իմ տունը գիշեր-ցերեկ եղել է շտաբ: Ոչ մեկն ինձ պարոն պատգամավոր չի ասել, ես ինձ սենատոր եմ համարել, այսինքն՝ իմ ընտրատարածքի ժողովրդի ներկայացուցիչն եմ եղել: Ես իմ ընտրողների խոսնակն եմ եղել, եւ հիմա նրանք բոլորն իմ քարոզիչներն են, ես այսօր կարող եմ ասել, որ 60 հազար քարոզիչ ունեմ: Շենգավիթցի մեկը եկավ, ասաց՝ ուզում եմ ծանոթանալ ձեզ հետ, իմ մածուն բերողը Թթուջուր գյուղից է, այնքան գովեց ձեզ, որ եկել եմ անձամբ տեսնեմ»,- հայտարարեց թիվ 12 ընտրատարածքում, որը հենց Շենգավիթն է ընդգրկում, առաջադրված ԲՀԿ անդամ Լյովա Խաչատրյանը, որը նախկինում պատգամավոր էր դարձել մեծամասնական ընտրակարգով Արաբկիրի տարածաշրջանն ընդգրկող թիվ 14 ընտրատարածքից:

Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# Առավել ընդունելին եվրոպական արժեհամակարգն է

Թիվ 10 ընտրատարածքի բնակիչները մի շարք գրավոր հարցեր են ուղղել ԱԺ պատգամավորի թեկնածու Սարիբեկ Սուքիասյանին՝ նպատակ ունենալով հստակեցնել նրա դիրքորոշումը երկրի տնտեսության զարգացմանը խոչընդոտող որոշ օրենքների վերաբերյալ, պարզել, թե որոնք են, ըստ նրա, սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս գալու ելքերը, ինչ քայլեր է նախաձեռնելու պատգամավոր ընտրվելու դեպքում՝ հանուն ՀՀ քաղաքացիների բարեկեցության:

- Պարոն Սուքիասյան, հայտնի է, որ տարեկան 1մլրդ դրամ եւ ավելի շրջանառություն ունեցող ձեռնարկություններին պարտադրվում է աուդիտի ենթարկվել եւ այդ ծառայության համար վճարել խոշոր գումար, որը, սակայն, չի ազատում հարկային ստուգումներից եւ ի հայտ եկած խնդիրների հանդեպ պատասխանատվությունից: Ինչպե՞ս եք վերաբերվում պարտադիր աուդիտին:

- Զարգացած երկրներում ընդունված է ֆինանսական շուկայում, բիզնեսի տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող ձեռնարկությունները ենթարկել աուդիտի: Մինչդեռ մեր տիպի երկրներում, որտեղ հարկային բեռը առանց այն էլ ծանր է, կարծում եմ՝ ճիշտ չէ ընդօրինակումը: Դա տրամաբանական չէ, որովհետեւ հավելյալ մի բեռ է, որից կարելի է զերծ պահել ձեռնարկությունները: Եվրոպական երկրներում աուդիտի դրական եզրակացությունը տնտեսվարող սուբյեկտներին ազատում է հարկային ստուգումներից եւ վարչարարական քաշքշուկներից, մինչդեռ մեր երկրում այդպես չէ: Ժամանակակից աշխարհում բնական ընկալվող սկզբունքները պետք չէ կիրառել զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող երկրներում: Պետք չէ ձեւացնել, թե իբր քայլում ենք ժամանակակից աշխարհին համընթաց, եթե չենք ուզում հայտնվել ծիծաղելի վիճակում: Միջազգային ժամանակակից չափանիշներով ապրելու համար մենք պետք է ունենանք համապատասխան կենսամակարդակ, բարձր եկամուտներ՝ աշխատավարձ, կենսաթոշակ: Գործող այս կարգի օրենքներով մենք նաեւ մեր երկրում կենսամակարդակի բարձրացմանն ենք խոչընդոտում:

- Հաստատագրված արտոնագրային հարկի կիրառումը ճի՞շտ եք համարում, թե՞ անհրաժեշտություն կա փոփոխություն կատարել:



- Տնտեսության մեջ կիրառվող օրենքները առհասարակ պիտի համապատասխան լինեն երկրի տնտեսական զարգացման մակարդակին: Այս առումով հաստատագրված կամ ֆիքսված հարկի տեսակը մեր երկրում ոչ միայն ճիշտ, այլեւ անհրաժեշտ է: Լրացուցիչ հաշվապահական ծախսերից, հարկային մարմինների հետ ավելորդ քաշքշուկից զերծ մնալու համար սա լավագույն հարկատեսակն է, բայց արդար չէ: Հաստատագրված հարկի կիրառումը հնարավորություն է տալիս, որ մանր բիզնեսը թափ հավաքի, դառնա միջին բիզնես, ավելանա դրամաշրջանառությունը, բարձրանան աշխատավարձերը: Դրանից հետո տնտեսվարողն արդեն կանցնի ընդհանուր հարկման դաշտ՝ կվճարի շահութահարկ: Սա է բնականոն ճանապարհը: Ներկայումս հաստատագրված վճարին փոխարինում է արտոնագրային վճարը, որը իրականում կանխավճար է եւ տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն չի տալիս համարձակորեն ներդումներ կատարել եւ ծավալել ձեռնարկատիրական գործունեություն: Արտոնագրային վճարը ձեռնտու է հարկային մարմիններին, բայց ոչ՝ ձեռներեցին, ոչ՝ ՀՀ զարգացմանը:

- Իր պատգամավորական գործունեության ընթացքում Ձեր եղբայրը՝ Խաչատուր Սուքիասյանը, առաջարկում էր բիզնեսի որեւէ ոլորտ ազատել հարկային պարտավորություններից. սահմանել զրոյական հարկ՝ տվյալ ոլորտը զարգացնելու նպատակով: Օրինակ՝ կոշկեղենը, հագուստեղենը, ոսկեղենը... Կշարունակե՞ք արդյոք քայլերը՝ այս գաղափարի իրագործմանը հասնելու համար:

- Ես լիովին կողմնակից եմ այդ մոդելի կիրառմանը: Եթե ուզում ենք ձեռներեցությամբ զբաղվող մարդկանց հնարավորություն տալ զարգացնելու իրենց բիզնեսը, հաջողություն ապահովելու տվյալ ոլորտում, ապա պիտի կատարենք այդ քայլը: Կարող են առարկել, թե դրանով կվնասենք բյուջեի մուտքային մասը: Որպեսզի չվնասենք այն, կարելի է կրճատել ստվերը:

- Կառավարման ո՞ր արժեհամակարգն է ընդունելի Ձեզ համար՝ ռուսակա՞ն, արեւմտյա՞ն, ասիակա՞ն, թե՞ այլ:

- Ինձ համար ավելի ընդունելին եվրոպականն է: Մեր երկիրը սոցիալիստական համակարգից անցում է կատարում ազատ շուկայական տնտեսության: Այդ անցումը կարելի էր ավելի արագ կատարել, բայց մենք, ցավոք, դեռեւս այդ ճանապարհին ենք:

Եվրոպական արժեհամակարգի պարտադիր բաղկացուցիչներն են բարեկեցիկ կյանքը, սոցիալական երաշխիքները՝ որակյալ առողջապահությունն ու կրթությունը, ապահով ծերությունը... Այս ամենի մասին մեր երկրում երբեմն խոսում են որպես իրողություն, մինչդեռ ամենքիս է հայտնի, որ դրանք Հայաստանի քաղաքացիների համար ընդամենը պատրանքներ են, որոնցով փորձ է արվում կերակրել մարդկանց: Մեր իրականության գլխավոր հակասություններից մեկը սա է:

Հայաստանի քաղաքացիներին պատրանքներ պետք չեն, նրանք կուշտ են դրանցից: Պետք են արդյունավետ քայլեր՝ ազատ շուկայական տնտեսության խոչընդոտները վերացնելու եւ հասարակության բարեկեցության մակարդակը եվրոպականին հասցնելու ուղղությամբ:

- Ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանի զարգացման հայեցակարգը:

- Ձեւակերպեմ այսպես՝ ՀՀ Սահմանադրության եւ օրենքների գերակայություն: Օրենքի պարտադիր եւ անվերապահ կիրառում, որ երբեւէ չշրջանցվի այն, որ օրենքը երբեւէ չստորադասվի գերատեսչական շահին: Ավելին՝ օրենքի մեջ գերատեսչական շահի բացակայություն: Քաղաքացու եւ պետության հարաբերություններում պետք է լինի օրենքի կիրարկման հավասարություն: Օրենսդիր մարմնի հաստատմանը ներկայացվող օրինագծերում պատկառելի քանակ են կազմում կառավարության հեղինակած փաստաթղթերը: Դրանց մեջ եւս պետք է հաշվի առնվեն գլխավորապես քաղաքացիների շահերը:

Կարեւորագույն խնդիր եմ համարում անկախ փորձագետների մասնագիտական կառույցների կարծիքը, որը պիտի գնահատական տա խորհրդարանի հաստատմանը ներկայացվող բոլոր օրինագծերին՝ հաշվի առնելով թե՛ ՀՀ քաղաքացիների, թե՛ բիզնեսի, թե՛ պետության շահերը, ստեղծվեն դրանց համադրմամբ եւ չհակասեն մայր օրենքին՝ ՀՀ Սահմանադրությանը: Իրավաբանների, տնտեսագետների, բնապահպանների ներգրավմամբ փորձագիտական այս անկախ կենտրոնի ստեղծումը հրատապ է եւ առաջնահերթ՝ Հայաստանի համար կտրուկ առաջընթացի նախադրյալներ ապահովելու համար: Մնացածը, ինչպես ասում են, տեխնիկայի հարց է. ամենօրյա ջանք, ազնվություն եւ խելամտություն:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

# «Իրենց էլ խաղի կանոններն այդպես են սովորեցրել»

Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 8 ընտրատարածքում մեծամասնականով առաջադրված ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրյանին Aravot.am-ը հարցրեց, թե Մալաթիայի բնակիչները այսպես ասած՝ «քյարթու» մտածելակերպ ունեն, ամբողջ օրը պահրոյական բազարների մեջ են, գողական օրենքներով են առաջնորդվում, այդ բնակիչների լեզուն ո՞նց եք հասկանալու՝ Վահագն Խաչատրյանը պատասխանեց. «Լեզու կգտնե՛մ, այդպես շատ մարդկանց եմ հանդիպել իմ կյանքում: Իրենց էլ խաղի կանոններն այդպես են սովորեցրել, իրենք ճիշտ խաղի կանոններին շուտ հարմարվում են, որովհետեւ ամենակարեւորը արժանապատվության հարցն է իրենց համար, այս համակարգը բոլորին վիրավորում է, անգամ այդ պահրոններին ու գողականներին: Ես խոստանում եմ ոչ թե մի Լֆիկ Սամո ունենալ, այլ նրա նման միլիոնավոր, ու իրենք կախված չլինեն իմ անձից, իմ տեղն էլ չիմանան: Հիմա ո՞ւմ սա բացատրես՝ ասի չէ, հենց այդ գողականներին: Ճիշտ է, ես իրենց լեզվով, ժարգոնով չեմ կարա բացատրեմ, բայց սա է իմ ասելիքը: Հիմա թող որոշեն՝ եթե գերադասելի կլինի, որ ունենան Լֆիկի նմաններ՝ թող ունենան»:

Մալաթիա-Սեբաստիա համայնքի բնակիչներին պահում է հիմնականում տոնավաճառը, քանի որ համայնքի բնակիչների մեծ մասը առեւտրով է զբաղվում: Իսկ տոնավաճառը կապված է անմիջականորեն ՀՀԿ-ի հետ: Երեկ էլ ՀՀԿ-ի հանրահավաքին լուրեր տարածվեցին, որ տոնավաճառի մարդկանց բռնի տարել են հավաքի: Այս առնչությամբ մենք Վահագն Խաչատրյանից հետաքրքրվեցինք՝ հաշվի առնելով, որ մարդկանց հացը կապված է տոնավաճառի, ՀՀԿ-ի հետ, ձեր պայքարն այդ համայնքում ինչպե՞ս եք պատկերացնում: Նա պատասխանեց, որ լուրեր չեն, հենց այդպես էլ եղել է, մարդկանց բռնի տարել են ՀՀԿ-ի հանրահավաքին. «Մեր պայքարը հենց դրա դեմ է, որ մարդկանց որոշումը կախված չլինի տոնավաճառից, հացից, որ կախված լինի իր որոշումից: Այսօրվա համակարգի արատավորությունը կայանում է նրանում, որ մարդկանց դարձրեց այդպիսին, աղքատացրեց, զրկեց իր աշխատելու հնարավորությունից, բարեկեցիկ կյանքով ապրելու բոլոր միջոցներից եւ դրանց տեր դարձրեց առանձին մարդկանց խմբերի՝ հանձինս Սամվել Ալեքսանյանի եւ նմանատիպ մարդկանց, որոնք շատ լավ իրենց ղեկավարում են, մանիպուլյացիա են անում: Իսկ մարդկանց վրա ազդելու լծակը ո՞րն է՝ աշխատանք կտամ կամ չեմ տա, կամ ես եմ պահում եւ այլն: Սա ամենավատ երեւույթն է, որ կարող է իշխանությունն անել իր երկրի քաղաքացիների հանդեպ: Այդ երկրի քաղաքացին, տվյալ դեպքում՝ տոնավաճառում ապրող մարդը երբեք երկրի պետական խնդիրներին մասնակից չի դառնում՝ Աստված հեռու տանի պատերազմ, աղետներ, ինքը մասնակից չի դառնում, որովհետեւ ինքը երկրի առջեւ պատասխանատվություն չունի: Ինքը ունի մի մարդու առջեւ պատասխանատվություն՝ շատ ձեւական՝ դա օլիգարխն է»:

Մեր հարցին՝ Դուք ի՞նչ եք առաջարկում՝ մարդիկ վտանգի տա՞կ դնեն իրենց աշխատանքը՝ ՀԱԿ անդամը պատասխանեց, որ մարդիկ պիտի ընտրություն անեն, թե ինչպես են ուզում լուծել իրենց վաղվա ապրելու խնդիրը. «Շարունակ այդ մարդու ստրուկը լինելո՞վ, թե՞ ավելի ազատ ապրելով, մի քիչ դժվարություն՝ շատ կարճ, հետո ավելի լավ ապրելու հնարավորություն: Ուղղակի այդ մարդիկ չգիտեն, որ իրենք հնարավորություն ունեն շատ ավելի լավ ապրելու, չգիտեն, որ երկրի բյուջեն ավելի մեծ պետք է լինի, քան հիմա կա, մարդիկ շատ լավ գիտեն, որ այդ մարդիկ հարստացել են իրենց գրպանի հաշվին, ոչ թե իր գիտելիքի հաշվին, այլ այդ նույն քաղաքացու, իմ, ձեր գրպանի հաշվին, դրսից փոխանցումների հաշվին: Մարդկանց պիտի բացատրենք սա: Շաքար եք գնում, կարագ եք գնում՝ 1/3-ն է գնում բյուջե, հիմա որոշեք՝ եթե ուզում եք այդպես ապրել՝ խնդրեմ: Մարդիկ կհավատա՞ն ինձ, կգա՞ն իմ հետեւից՝ շատ լավ, ես խոստանում եմ, որ շատ կարճ ժամանակ հետո իրենց կյանքը կփոխվի, լավագույն օրինակը Վրաստանն է. մի մարդ՝ Միխայիլ Սահակաշվիլին, այդ արատավոր համակարգը ջարդեց, ամբողջ կոռուպցիան վերացավ»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

aravot daily
ՇԱԲԱԹ 14.04.2012

# Ծառուկյանը ծնկի իջավ ժողովրդի առջեւ

## ԲՀԿ առաջնորդն Արմավիրի մարզում հայտարարեց, որ տեր է կանգնելու ԲՀԿ-ին տրված քվեներին

«Ժառանգությունը» շատ փոքր է, որ պահանջի»,- Aravot.am-ի հարցին՝ ինչպե՞ս եք վերաբերվում «Ժառանգության»՝ ընտրությունների համատեղ վերահսկման շտաբի ձեւավորման փաստաթղթի տակ պարտադիր կուսակցությունների առաջին դեմքերի ստորագրությունները դնելու պահանջին, ասաց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Նաեւ հավելեց. «Եթե «Ժառանգությունը» համապատասխան «խաղեր» ունի կատարելու, թող կատարի: Ով պետք է՝ դա ստորագրել է: ԲՀԿ-ն էլ միշտ հայտարարել է, որ բոլորի հետ պատրաստ ենք համագործակցել արդար, թափանցիկ ընտրություններ կատարելու համար: Ժողովրդի ձայներին տեր ենք կանգնելու, ով էլ խախտի՝ թույլ չենք տալու: Ես ուզում եմ, որ ժողովուրդը զգա՝ կա ուշադրություն, կա վերաբերմունք, կա գնահատական: Ժողովուրդն ում ինչքանով կվստահի՝ թող այնքան էլ պատասխանատվություն կրի»:

Երեկ ԲՀԿ առաջնորդը նախընտրական քարոզարշավի շրջանակներում եղավ Հայաստանի հոգեւոր մայրաքաղաքում՝ Էջմիածնում, ապա Արագածոտնի Դալարիկ, Արտենի եւ Արագած համայնքներում, Արմավիր եւ Մեծամոր քաղաքներում: Լրագրողները Գագիկ Ծառուկյանից հետաքրքրվեցին՝ իր կարծիքով՝ ԲՀԿ-ի դեմ «սեւ PR» իրականացվո՞ւմ է. «Ուժեղի վրա միշտ էլ կա, բայց ուժեղը... ուրիշի վրա ես երբեք ու երբեք ցեխ չեմ շպրտում»: Դա անողներն, ըստ նրա, «թույլերն» են: Ծառուկյանը խորհուրդ տվեց իրականությունն իմանալու համար ժողովրդից հարցնել, թե որ ուժն ինչքան տոկոս է ստանալու խորհրդարանական ընտրություններում, քանի որ, ըստ նրա, քաղաքական գործիչները բոլորն էլ մեծ-մեծ թվեր կասեն: Aravot.am-ը պարոն Ծառուկյանից նաեւ հետաքրքրվեց՝ ինչպե՞ս է վերաբերվում երեկ կայքերից մեկի հրապարակած փաստահավաք խմբի զեկույցին, որտեղ խոսվում է մարտիմեկյան իրադարձություններում իր թիկնազորի մասնակցության մասին: «Սկսում են ցեխ շպրտել: Բոլորն էլ գիտեն՝ Ծառուկյան Գագիկը ժողովրդի կողքին կանգնած է եղել, կանգնելու է: Տուժեմ էլ, վնասվեմ էլ, կորցնեմ էլ՝ ես այս ժողովրդի հարգանքն ու վերաբերմունքը զգում եմ: Ավելի շատ եմ անելու, կարող եմ կորցնել, բայց ժողովրդի վստահությունը չեմ կորցնելու»:



Էջմիածին քաղաքում, որտեղից էլ սկսվեց երեկվա քարոզարշավը, կուսակցական ղեկավարին դիմավորեցին Արմավիրի ԲՀԿ-ական մարզպետ Արայիկ Աղաբաբյանը, ԲՀԿ-ական պատգամավոր Ռուստամ Գասպարյանը եւ կուսակցության տեղի պատասխանատուները: Ծառուկյանին ամենուր դիմավորում էին աղ ու հացով, Արտենիում անգամ տեղի ԲՀԿ-ական համայնքապետը գառ մորթեց կուսակցության առաջնորդի ոտքերի տակ: Մարզկենտրոն Արմավիրում շատ գեղեցիկ համերգ էին կազմակերպել: Ծառուկյանին ամենուր ընդունում էին շատ ջերմ ու դրվատանքի խոսքերով: Էջմիածնում անգամ նրան ժողովրդին համախմբելու կոչ արեցին: Ի դեպ, բավականին հետաքրքիր իրավիճակ ստացվեց Էջմիածնում: Գագիկ Ծառուկյանը բեմահարթակից ելույթ ունեցավ, ներկայացրեց կուսակցության նախընտրական ծրագիրը, իր թիմին: Ելույթից հետո, երբ ցանկանում էր իջնել հարթակից ու մոտենալ հավաքվածներին՝ չհասցրեց: Մարդիկ իրենք առաջ եկան: Աստիճանները ետնաբեմում էին, ու եթե նա փորձեր իջնել, կտացվեր, որ ընդառաջ չգնաց ժողովրդին: Ծառուկյանը մի պահ կանգնեց, ապա՝ ծնկի իջավ ու ձեռք մեկնեց իրեն պարզած ձեռքերին: Նա մոտ 10-15 րոպե ծնկաչոք զրուցում էր մարդկանց հետ:

Արթիկի շրջանի գյուղերում ԲՀԿ առաջնորդն իր խոսքում հիմնականում կանգ առավ նախընտրական ծրագրի՝ գյուղատնտեսությանը վերաբերող հատվածներին, ասաց, որ իրենք ոչինչ «օդից» չեն վերցրել, հետեւություններ են արել իրենց անցած ճանապարհից: Դարալիկում Ծառուկյանին խնդրեցին իրենց գյուղին մի տրակտոր նվիրել: Ասաց, որ դա կանի ընտրություններից հետո, որպեսզի չստացվի, թե ընտրակաշառք է բաժանում: Ընտրություններից հետո խոստացավ զբաղվել նաեւ Արտենի գյուղում կարկտակայան տեղադրելու հարցով: Ընդհանրապես, իր ելույթներում Ծառուկյանը կոչ էր անում սեփական սրտի, խղճի մտոք մայիսի 6-ին գնալ ընտրությունների եւ գիտակցել, որ այդ օրը մարդիկ ընտրելու են իրենց առաջիկա հինգ տարիների ապագան: Ու իր կողմից խոստանում էր, որ տեր են կանգնելու իրենց ձայներին. «Ինչքան մեզ վստահեք, մենք պատրաստակամ ենք այդ չափով պատասխանատվություն կրելու: Բայց անկախ այդ տոկոսների չափից՝ բոլորիդ սիրում եմ, հարգում եմ եւ օգնելու եմ ուժերիս ներածին չափ»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

### Մուկուչյանը չի հավատում Սաֆարյանի ասածներին

Ընտրապայքարը ընթանում է հավասար պայմաններում, ու պատգամավորի թեկնածուների համար առողջ մրցակցություն կա: Երեկ Aravot.am-ին վստահեցրեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանը:

Մեր հարցին, թե անհավասար պայմաններ չե՞ն ստեղծվում ընդդիմության թեկնածուների համար, որոնք խոչընդոտների են հանդիպում շտաբների համար տարածքներ վարձակալելու հարցում, պատասխանեց. «Ես ձեզնից եմ լսում, իսկ ո՞վ պետք է տրամադրեր այդ շտաբը... ես դրանք համարում եմ արհեստական տեսակետներ»:

Ինչ վերաբերում է Ստյոպա Սաֆարյանի հայտարարությանը, թե իրեն՝ որպես ընդդիմության ներկայացուցչի, վախենում են շտաբի համար տարածք տալ վարձակալության, ու ինքը մնացել է առանց շտաբի, պարոն Մուկուչյանը հակադարձեց. «Ես քաղաքում տեսել եմ «Ժառանգություն» կուսակցության նախընտրական շտաբ, որն ունի համապատասխան ցուցապաստառներ, ցուցանակներ, իսկ դա արդեն նշանակում է, որ ներկայացված փաստերը շտաբների մասով չեն համապատասխանում իրականությանը»:

Մեր դիտարկմանը, թե հիմնականում ինքնաբացարկի են դիմում անվանի թեկնածուների հետ նույն ընտրատարածքում առաջադրվածները, պարոն Մուկուչյանը նկատեց. «Որեւէ կերպ հնարավոր չէ մարդուն զրկել ինքնաբացարկ ներկայացնելու իրավունքից... այս հարցում որեւէ արտառոց բան գոյություն չունի»:

Հիշեցնենք, որ ինքնաբացարկ ներկայացնելու հետեւանքով Գագիկ Ծառուկյանը եւ Սամվել Բալասանյանը մրցակիցներ չեն ունենալու:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀՅԴ-ն կոչ արեց հավատալ եւ վստահել իրեն

ՀՅԴ-ն երեկ Վայոց Ձորի մարզում էր: Նախընտրական հանդիպումը տեղի ունեցավ Եղեգնաձորում: Քաղաքի 18000 տեղանոց ամֆիթատրոնը հանդիպումից դեռ շատ առաջ արդեն մարդաշատ էր այնքան, որ շատերը նույնիսկ կանգնած մնացին մինչեւ միջոցառման ավարտը:

Հանդիպումը բացեց ՀՅԴ Վայոց Ձորի նախընտրական շտաբի ղեկավար, այս ընտրատարածքում նախկինում մեծամասնական ընտրակարգով առաջադրված, ապա նաեւ ինքնաբացարկ հայտնած Սամվել Բաբայանը: Նա նախ ողջունեց հավաքվածներին ու ասաց, թե ՀՅԴ-ն եղեգնաձորցիներին խոսք ունի ասելու եւ մտահոգություն հնչեցնելու, «որովհետեւ մեր երկիրը, մեր ժողովուրդը հիմա գտնվում են այնպիսի վիճակում, որից դուրս գալու ելքը ձեր եւ մեր ձեռքում է»: «Առաջիկայում համապետական ընտրություններ են, պետք է ճիշտ կողմնորոշվել, պետք է անել այն, ինչը կփոխի մեր կյանքը, եւ դրա մասին ենք ուզում խոսել եւ ներկայացնել ձեզ»,- ասաց Բաբայանն ու խոսքը փոխանցեց ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, որն ասաց, թե Հայաստանի Հանրապետության 20-ամյա պատմության այս փուլում էլ մեր շուրջը համատարած աղքատություն է, մեր ներքին կյանքը հեռու է համերաշխ լինելուց, եւ իրավիճակը շտկելու՝ կյանքը բարելավելու հույսի նշույլը չի երեւում: Մարգարյանն ասաց, թե վերջին քսան տարիների ընթացքում պետությունը մի բան է արել՝ կարողացել է երկրում ձեւավորել գերհարուստների դասակարգ, օլիգարխների դասակարգ: «Այն իշխանությունը, որը մենք ունեցել ենք, հարուստների իշխանություն է, հարուստների խավն է ձեւավորել այս իշխանությունը, դրա համար էլ չի մտածում, որ պետք է հոգ տանի ժողովրդի մասին: Մենք դեմ չենք հարուստներին, մենք դեմ ենք, երբ այս հարստությունը ստեղծվում է ժողովրդի թշվառության եւ աղքատության գնով: Մենք դեմ ենք այս գերբեւեռացված վիճակին»,- ասաց Մարգարյանը՝ հավելելով, թե այսօր մի կողմում ապրելու հնարավորություն չունեցող մեծամասնությունն է, մյուս կողմում՝ հսկայական հարստություն դիզած մեծամասնությունը, ու հայտարարեց, թե այս վիճակն այլեւս չի կարելի հանդուրժել:



Անդրադառնալով հասարակության շրջանում առկա այն մտայնությանը, թե միեւնույն է՝ ոչինչ հնարավոր չէ փոխել, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչն ասաց՝ «հավատացեք՝ այդպես չէ», ու մանրամասնեց, որ ամեն մի ուժ ունի արժեքային իր համակարգը եւ ձեւավորում է դրան հատուկ տնտեսական համակարգ, ու այսօրվա իշխանությունը ձեւավորել է արժեքային այն համակարգը, որի կրողն է: Դաշնակցությունը, նրա ասելով, հստակորեն տարբերվում է մյուս բոլոր կուսակցություններից իր արժեքային համակարգով եւ ունի հստակ գաղափարախոսություն՝ սոցիալիստական ուղղության դավանողն է, եւ այս «սոցիալիզմը բխում է մեր ազգային էությունից»: «Այնպես որ, խնդիրը քաղաքական ուժի դավանած գաղափարների մեջ է: ՀՅԴ-ն սոցիալիստական կուսակցություն է, եւ դա բխում է մեր ժողովրդի, կուսակցության էությունից: Մենք հավատացած ենք, որ հայ ժողովուրդը ունի իղձեր, որոնք պիտի իրականացնի, ու կարելի է նոր էջ բացել մեր ժողովրդի համար, եթե գնաք ընտրությունների եւ ընտրեք Դաշնակցությանը»,- ասաց Հրանտ Մարգարյանը:

Ելույթ ունեցավ նաեւ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը ու արձանագրեց, թե այսօր հայրենակիցներն ավելի շատ են Հայաստանից դուրս, քան Հայաստանում: Ի՞նչ իրավունքով են մարդիկ խոսում սոցիալական արդարությունից, սոցիալիզմից, երբ թքած ունեն ժողովրդի վրա, երբ չեն հարցնում՝ իրենց տված թոշակով, աշխատավարձով հայ մարդը կարո՞ղ է ապրել, թե՞ ոչ: «Այն նվազագույն աշխատավարձը, որ առաջարկում է իշխանությունը՝ 32,5 հազար դրամ է կազմում, կեսն է այն զամբյուղի, որն անհրաժեշտ է մարդուն գոյատեւելու համար: Այս ամենի մեջ ժողովրդին պահած քաղաքական ուժն ի՞նչ իրավունք ունի խոսել արդարությունից, ժողովրդավարությունից»,- հայտարարեց Ռուստամյանը:

Նա հայտարարեց, թե ՀՅԴ-ի համար պետության, ազգային շահերը գերադասելի են որեւէ տեսակի այլ շահերից, եւ եղեգնաձորցիներին կոչ արեց իրավիճակը փոխել Դաշնակցության հետ միասին եւ հորդորեց վստահել եւ ընտրել ՀՅԴ-ին:

Հանրահավաքում ելույթ ունեցան նաեւ ՀՅԴ համամասնական ցուցակի երկու կին թեկնածուները՝ Նվարդ Մանասերյանն ու Նունե Պետրոսյանը: Հանրահավաքն ավարտվեց համերգային ծրագրով:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հ. Գ. ՀՅԴ-ի հանրահավաքի մասին այլ մանրամասները կարդացեք Aravot.am կայքում:

# «Բոլոնյան պրոցեսը կարող է վնասել, եթե մեր կրթական համակարգը հետ մնա ընդհանուր զարգացումներից»

## «Առավոտի» հարցազրույցը Երեւանի պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանի հետ

- Այսօր բարձրագույն կրթական համակարգը վերապրում է ծանր շրջան, ինչի՞ հետ է դա կապված:

- Որովհետեւ աշխարհում կատարվող փոփոխությունները պահանջում են, որպեսզի բարձրագույն կրթական համակարգը անմիջապես արձագանքի ընթացող պրոցեսների պահանջներին, իսկ ինքը՝ ակադեմիական համակարգը, իր բնույթով բավականին պահպանողական է: Ինչպե՞ս փոփոխվել եւ չքանդվել՝ սա է հարցը: Տարբեր երկրներ տարբեր պատասխաններ են տալիս. պետք է ասել, որ դա կախված չէ երկրի ներուժից:

- Այսօր բարձրագույն կրթության մասին խոսելիս առաջին բանը, որ լսում ես՝ «բոլոնյան համակարգ», «բոլոնյան պրոցես», ի՞նչ է դա՝ մատչելի լեզվով:

- Բոլոնյան պրոցեսը ընդհանուր վերնագիրն է փոփոխությունների, սա էլ ընդհանուր փոփոխությունն է բարձրագույն կրթական համակարգի, որովհետեւ նոր ինֆորմացիոն հասարակությունը պահանջում է, որ բարձրագույն կրթությունը էլիտարից դառնա զանգվածային: Ուսանողների քանակը տասնյակ անգամ ավելացել է: Այսօր բարձրագույն կրթությունը ոչ թե շքեղություն է, այլ անհրաժեշտություն, եւ այս առումով Հայաստանը զգալի հետ է ընկնում Ադրբեջանից, Վրաստանից: Երբ ասում ենք՝ մեր ազգը ուսումնատենչ է, այդպես չէ, այսօրվա տվյալներով՝ մենք բավականին հետ մնացողների շարքում ենք: Մենք փորձում ենք գտնել լուծումներ, ինչպե՞ս հնարավոր է այսպիսի սակավ ռեսուրսներ ունենալով, ինչպես Հայաստանինն է, ինչ-որ ձեւով համապատասխանեցնել համակարգի փոփոխություններին: Մենք ի սկզբանե գտնվում ենք ոչ հավասար պայմաններում: Համեմատենք միայն կրթության ոլորտի հատկացումները՝ պետական բյուջեն 0.3%-ն է համախառն արդյունքի, ավելացնենք վճարովի համակարգի մուծումները եւ այլն 0.6%, ընդհանուր 0.9%: Խորհրդային Միության տարիներին բարձրագույն կրթության ցուցանիշը եղել է 3%, դա բարձր ցուցանիշ է: Եթե համեմատենք եվրոպական երկրների հետ, ապա Եվրոպան 3%-ի շեմը դրել է 2010 թ.-ին, բայց չի հասել, տեղափոխել է 2020թ.: Այս առումով Բոլոնիայի պրոցեսը մեծ վտանգ է պարունակում զարգացող երկրների դասին, այն բացում է բոլոր ճանապարհները, դա միջազգայնացման պրոցես է, որ կարող է խորտակել թույլ երկրներին: Եթե մենք վերցնում ենք Եվրոպական Միության ծրագիրը, ապա պարտավորվում ենք առնվազն համախառն արդյունքի 2%-ը տալ բարձրագույն կրթությանը եւ համախառն արդյունքի 3%-ը՝ գիտությանը՝ ըստ Եվրոպական համալսարանի ասոցիացիայի հռչակագրի:



- Իսկ ինչպե՞ս մենք կարող ենք մրցակցել:

- Ժամանակակից համալսարանը կրեատիվ տնտեսության մի մասն է: Համալսարանը եւ արդյունք է կրեատիվ տնտեսության, եւ նաեւ՝ դրա շարժիչը: Հայաստանում բացակայում է կրեատիվ տնտեսությունը, բայց կան դրա բաղադրիչները: Ուստի համալսարանը պետք է ստեղծի համակարգ, որտեղ կարողանա գոյատեւել: Համակարգը գոյատեւելու համար պիտի տարբերվի իր մակարդակով: Ցանկացած տեղ համալսարանը մի մակարդակ բարձր է շրջապատից: Որպեսզի համալսարանը կարողանա պահպանել իր գործառույթը, ստեղծել եւ փոխանցել գիտելիք, ապա իր ներսում պետք է պատնեշներ ստեղծի բացասական երեւույթներից:

Այսպես ասած՝ «Բոլոնյան» կոտրում է սահմանները, մենք այսօր լուրջ պրոբլեմ ունենք մրցակցության, այսօր մեր համալսարանում չենք տեսնում դա, որովհետեւ կան վիզային ռեժիմ եւ այլ տնտեսական գործոններ, որոնք հնարավորություն չեն տալիս մեր ուսանողներին գնալ արտասահման, այլապես կարող է ուսանող չունենանք: Պետք է աշխատենք այլ ուղղությամբ, օգտագործենք միջազգայնացումը որպես գործոն, այսինքն՝ համալսարանը պետք է կապ հաստատի գործընկերների հետ, որովհետեւ համալսարանի այս միջազգայնացումը տալիս է հնարավորություն՝ ստեղծելու մի ցանց, որը գոյություն ունի ե՛ւ Հայաստանում, ե՛ւ Հայաստանից դուրս, պետք է լինեն գործընկեր համալսարանների տարբեր համագործակցության ձեւեր, եւ մեր համալսարանը չպետք է դառնա միայն սպառող: Մենք ստեղծեցինք մի շղթա, որտեղ շղթայի ամեն մի օղակ կարող է առանձին լինել: Մենք կարող ենք հանդես գալ եւ դոնորի, եւ պատվիրատուի, եւ սպառողի դերում: Նախ եւ առաջ այս շղթան կաշխատի, եթե կա մի օղակ, որը ստեղծագործող է: Եթե հաշվի առնենք այն, որ մասնագիտությունները ստեղծվում են շատ արագ, ապա կարելի է գտնել այն տեղը, որը կարող է նորույթ լինել, եւ դա չի պահանջում մեծ ծախսեր: Եթե Հայաստանի բուհերն ուզում են ինչ-որ ձեւով մտնել այս համակարգի մեջ, ապա պետք է հասկանան, որ Հայաստանը մեզ համար շատ փոքր է, եւ, դուրս գալով միջազգային շուկա, մենք ոչ թե օգտվողի, սպառողի դերում պիտի լինենք, այլ պետք է փորձենք աշխատել հավասար, այլապես հետ մնացողի եւ ուշացողի դերում կմնանք: Այդ գաղափարները, ինչպես մենք հասկացանք, հետաքրքրում են ոչ միայն մեր, այլեւ եվրոպական այլ համալսարանների, որոնք երկրորդ շարքում են գտնվում, եւ Բոլոնիայի պրոցեսը մեծ վնասներ է բերում նրանց: Բնական է, ուսանողը կարող է գնալ այլ համալսարան, որտեղ ավելի լավ կրթություն կարող է ստանալ, հետեւաբար այդ երկիրը զրկվում է իր կրեատիվ տնտեսության կարեւոր բաղադրիչից, ինչպիսին է համալսարանը:

Շարունակությունը՝ հաջորդիվ:

# Ասֆալտի որակից մինչեւ գյուղատնտեսության ապահովագրում

## «ՕԵԿ»-ը ԱԺ-ում հայտնվելուց հետո բժիշկ-հիվանդ շփումը նաեւ ինտերնետի միջոցով կապահովի, իսկ «Ժառանգությունը» դեղերի պիտանելիության ժամկետը կվերանայի:

«Ժառանգություն» կուսակցությունը խորհրդարանում հայտնվելու դեպքում խաղատները դարձնելու է պետական: «Շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելով, ինչպես որ նշված է կուսակցության նախընտրական ծրագրում՝ շահումով խաղերի հանդեպ պետական մենաշնորհ հաստատել: Ընդ որում, այդ բիզնեսից գոյացած գումարները «Ժառանգությունն» առաջարկում է ուղղել սոցիալական եւ քաղաքացիական պաշտպանության ոլորտներ: Առողջապահության ոլորտում էլ «Ժառանգությունը» մի նոր առաջարկ է ներկայացնում՝ ներկրվող դեղերի ներկայումս սահմանված մատակարարման պահին դեղերի 2/3-ի մնացորդային պիտանելիության ժամկետը վերանայել: Այսինքն՝ ինչպես հիմնավորում է կուսակցությունը, ներկայիս մնացորդային ժամկետը ռիսկային է. շրջափակումից ելնելով՝ դեղերը մինչեւ հասնում են Հայաստան, դեղի ինքնարժեքը թանկանում է, որի համար քաղաքացին կամ բուժհիմնարկն է վճարում:

Անդրադառնալով նախընտրական ծրագրերին՝ «Առավոտը» ներկայացնում է կուսակցությունների քիչ թե շատ նոր առաջարկները: Որոշ կուսակցությունների ծրագրերն, ընդհանուր առմամբ, նման են: Բոլորն էլ խոստանում են այնպիսի բարեփոխումներ, որից հետո ժողովուրդը, հավանաբար, այլեւս չի ասի՝ «երկիրը երկիր չէ»:

Առողջապահության ոլորտում «Օրինաց երկիրն» էլ մի նոր առաջարկ է անում. «Երկրի յուրաքանչյուր բուժհաստատության բժշկական մասնագետների հետ հեռա եւ համացանցային խորհրդատվությունների համակարգի ներդրում»:



Գրեթե բոլոր կուսակցություններն իրենց ծրագրերում կարեւորություն են տալիս բժշկական ապահովագրությանը: Իսկ «Ժառանգությունն» առաջարկում է այդ ապահովագրման 30%-ն իր աշխատակիցների համար վճարի գործատուն. «Այդ մասով նվազեցնել շահույթը՝ հաշվարկելով այն որպես ծախս»: Կենսաթոշակային համակարգում ՕԵԿ-ի առաջարկած բարեփոխումով թոշակը աշխատավարձի 35%-ից ոչ պակաս է լինելու: Կուսակցությունը որոշել է վերանայել աշխատավարձի եւ ստաժի հաշվարկման գործակիցները: Ի տարբերություն ՕԵԿ-ի՝ «Ժառանգությունը» նույն ոլորտում կոնկրետ թվեր է ներկայացնում՝ «Նվազագույն կենսաթոշակը եւ նվազագույն աշխատավարձը 2013թ. հասցնել 80.000 դրամի՝ ամեն հաջորդ տարի ավելացնելով 10.000 դրամով»:

«Հարուստ գյուղը պետության անվտանգության գրավականն է»,- համոզված է «Ժառանգությունը», ուստի գյուղացուն օգնելու համար կուսակցությունը նախատեսել է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների պետական սուբսիդավորումը հասցնել մինչեւ 50%-ի: Ըստ այս կուսակցության ծրագրի՝ մթերող ձեռնարկություններում պետք է ներդնել որակի ստուգումներ իրականացնող այնպիսի համակարգ՝ պետական ստանդարտներով ու հսկողությամբ, որպեսզի, ինչպես գրված է ծրագրում. «Մթերող կազմակերպություններին թույլ չտրվի ձեռնարկել կամայական գործողություններ»:

Հաշվի առնելով, որ գյուղատնտեսության նախարարը օեկական է, կարելի էր ենթադրել, որ գոնե այս կուսակցությունը մի նոր բան կառաջարկի գյուղացուն: Չնայած ՕԵԿ-ն էլ առաջարկում է նույնը, ինչ մյուս կուսակցությունները, բայց պետք է նշել, որ կրկին գայթակղիչ են ու գյուղացու սրտով. «Գյուղական տնտեսությունների եւ վերամշակող ձեռնարկությունների համար երկարաժամկետ, ցածր տոկոսադրույքներով վարկեր: Մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման լիզինգային եւ դրամաշնորհային մեխանիզմների ներդրում»: Թերեւս այս կուսակցության միակ նոր առաջարկը գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրման համակարգի ներդրումն է: Թե որքանով այն կիրականանա՝ դժվար է ասել, քանի որ ապահովագրական ընկերությունններն առաջիկա տարիներին չեն պատրաստվում ապահովագրել այս ոլորտը, պատճառաբանելով՝ ռիսկը շատ մեծ է, «տակից» չեն կարող դուրս գալ:

«Ավելի լավ է՝ 100 մարդ ունենա մեկական խանութ, քան մեկը՝ հարյուր»: Սա ՕԵԿ-ի ծրագրում հարկային եւ մաքսային քաղաքականության դրույթի նախաբանն է, որից հետո կուսակցությունը առաջարկում է իր բարեփոխումներն այդ ոլորտում: Մասնավորապես՝ «Անբարեխիղճ, հատկապես խոշոր հարկատուների եւ ներմուծողների նկատմամբ հարկային եւ մաքսային վարչարարության խստացում ու բարեխիղճ հարկատուների համար առավել պարզեցված ընթացակարգերի սահմանում եւ կիրառում»:

Այս ոլորտում «Ժառանգությունն» էլ որոշել է՝ «Փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Շահութահարկի մասին» օրենքում, որով մինչեւ 20 մլն դրամ շրջանառություն ունեցող արտադրական ու սպասարկման ոլորտի ընկերությունները եւ մինչեւ 40 մլն դրամ շրջանառություն ունեցող առեւտրական ընկերությունները լիովին ազատել շահութահարկից»:

Բոլոր թեկնածու կուսակցություններից միայն «Ժառանգությունն» է ուշադրություն դարձրել մեր ճանապարհների՝ ժամանակից շուտ շարքից դուրս եկող ասֆալտին: Ուստի կուսակցությունն առաջարկում է՝ «Բարձրացնել ավտոմոբիլային ճանապարհների ասֆալտե ծածկույթի հանդեպ ներկայացվող պահանջները»:

Ինչպես բոլոր, այնպես էլ այս 2 կուսակցությունները բազմաթիվ խոստումներ են տալիս, սակայն դրանք, ինչպես կյանքն է ցույց տալիս, չեն իրականանում:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ